ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԲԵՅՐՈՒԹԻ ՍՐԲՈՑ ՀՌԻՓՍԻՄՅԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆԸ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ *ՍՐԲՈՑ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ* ՈՐ Ի ՊԷՅՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Մեզի ուղղուած Ձեր գիրէն որ այս տարի արժանավայել շուքով պիտի նշէք Սրբոց Հռիփսիմեանց Երկրորդական Վարժարանի հիմնադրութեան 75-ամեայ Յոբելեանը:

Մենք մօտէն տեղեակ ենք այն կրթական առողջ և ազգօգուտ գործունէութեանը, որ Սրբոց Հռիփսիմեանց Վարժարանը ծաւալած է Լիբանանահայութեան կեանքի մէջ անցնող 75 տարիներու ընթացքին, յատկապէս հայ նոր սերունդի կազմաւորման այնքան նուիրական և կենսական մարզին մէջ:

Դուք գիտցաք լայնախոհ ոգիով, առանց դաւանաբանական խտրութեան, մարդկային կրթական գործը յառաջ տանիլ հայկական ազգային իւրայատուկ դրոշմով: Շարունակեցէք նոյն ոգիով յառաջ տանիլ Ձեր առաքելութիւնը, նորանոր իրագործումներու հեռանկարով, լեզուական գիտական ուսմանց կողքին, ոյժ տալով քարոյական և հոգևոր արժէքներուն:

Մեր ազգի քրիստոնէական ծննդավայրին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած և կը հայցենք որ Իր երկնային օրհնութեան և շնորհին տակ ծաղկեցնէ Սրբոց Հռիփսիմեանց Վարժարանը, որպէսզի 75-ամեակը դառնայ յառաջդիմութեան նոր քայլ մը մեր նոր սերունդի մարդկային և ազգային առողջ կազմաւորման շարունակական ընթացքին մէջ: Թող Ս. Հռիփսիմէի մաքուր կուսութեան և գերազանց առաքինութեան ճառագայթները շողան Ձեր հաստատութեան վրայ և ներթափանցեն Ձեր աշակերտներու հոգիներուն մէջ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 2 Սեպտեմբերի 1998
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/141